ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 11, 1958 Общественные науки

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

Ինչպես հայտնի է, Հայկական Վերածնության հարցին նվիրված մեր երկու հոդվածների շուրջը ծավալվեց մտքերի փոխանակություն «Տեղեկագրի» էջերում։ Այս նամակով կամենում ենք արտահայտել մեր վերաբերմունքը ընկերների ելույթների նկատմամբ։

Մենք պնդում ենք, որ X—XIII դարերի Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները իրենցից չեն ներկայացրել ո՛չ կապիտալիզմ և ո՛չ էլ կապիտալիզմի կացութաձև, սակայն կան հիմքեր ենթադրելու կապիտալիստական արտադրական հարաբերությունների առանձին սաղմերի առկայության մասին։ Մենք գտնում ենք, որ ճիշտ է Մառի, Մանանդյանի, Ադոնցի, Օրբելու և շատ ուրիշների այն թեզը, թե այն ժամանակվա Հայաստանի հասարակարգը զարգացած ֆեոդալիզմ էր, հասունացած այն աստիճան, որ նրա ընդերքում առաջանում էին տարրեր ֆեոդալիզմի, որպես հասարակարգի, կործանման համար։

Արդ՝ ինչ ենք հասկանում ասելով, թե առաջանում էին տարրեր, այլ կերպ ասած, նախադրյալներ նոր, ավելի բարձր հասարակարգի անցման համար։

Հասկանում ենք, նախ՝ հսկայական նյութական միջոցների կուտակումը «մեծատունների», այդ նոր առաջացած սոցիալական շերտի ձեռքին, և երկրորդ՝ արտադրողների զրկվելը արտադրության միջոցներից, այսպես ասած, чернь-ի, պրոլետարիատի այդ նախնիքների առաջացումը քաղաքներում։ Այս երկու հասկացությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ կապիտալի նախասկզբնական կուտակում, որը, սակայն, Հայաստանում չզարգացավ այն աստիճան, որ վերածվեր կապիտալիստական կուտակման, այսինքն կապիտալիզմի։ Ուրեմն Հայաստանում հասարակության զարգացումը հասել էր ոչ թե արտադրության կապիտալիստական եղանակին, այլ նրա նախապատմությանը։ Հասարակությունը մնում էր դեռևս ֆեոդալական հարաբերությունների մակարդակի վրա։ Վերածընունդն էլ իր սոցիալ-տնտեսական հիմունքներով, ըստ մեր մտածողության ֆեոդալական հասարակության զարգացման հենց այդ աստիճանի՝ նախասկզբնական կուտակման արդյունքն է։

Սակայն գոյություն ունի Վերածնության վերաբերյալ նաև այլ տեսակետ։ Կան մարդիկ, որոնք գտնում են, թե Վերածնությունը նոր առաջացած կապիտալիստական հարաբերությունների վրա բարձրացող բուրժուական կուլտուրա է։ Եվ որովհետև Հայաստանում չեն առաջացել կապիտալիստական հարաբերություններ, ապա ուրեմն հիմքեր չկան խոսելու հայկական Վերածնության մասին։

Նախ՝ քննության ենթարկենք այդ սխեմայի առաջին մասը՝ Վերածնության հասկացությունը որպես այդպիսին։ Պրոֆ. Բ. Առաքելյանը հայկական Վերածնության մեր մեկնարանության դեմ գրված իր հոդվածում (տե՛ս «Տեղեկագիր», 1956, № 5) առաջադրում է հարցի հետևյալ սահմանումը. «Վերածնությունը կամ Վերածնության էպոխան դիտվում է իբրև Արևմտյան և Կենտրոնական Եվ-

ropայի մի շարք երկրների կուլտուրական ու գաղափարական զարգացման մի ժամանակաշրջան, որը պայմանավորված է կապիտալիստական հարաբերությունների առաջացմամբ այդ երկրներում» (նույն տեղում, էջ 89)։ Վերածնությունը բացատրել կապիտալիստական հարաբերությունների առաջացմամբ ճիշտ չէ, թեկուզ այն պատճառով, որ կապիտալիստական արտադրական հարաբերությունները առաջացան Վերածնության անկումից՝ XVI դարից հետո և այն էլ ո՛չ Միջերկրական ծովի երկրներում և ո՛չ էլ Կենտրոնական Եվրոպայում, այլ Հյուսիսում, սկզբում Նիդերլանդիայում, հետո Անգլիայում։ Վաղ Վերածնությունը բացատրել XIV—XV դարերում առաջացած կապիտալիզմի սաղմերով, ինչպես այդ անում է Բ. Առաքելյանը (տե՛ս նույն տեղում, էջ 90), նույնպես ճիշտ չէ, այն պարզ պատճառով, որ այդ սաղմերը գոյություն ունեին Իտալիայում, իսկ Գերմանիայում և Ֆրանսիայում չկային կապիտալիզմի սաղմեր, բայց կար վաղ և զարգացած Վերածնություն։ Վերածնության առաջացման պատճառը չէին կարող լինել կապիտալիզմի սաղմերը նաև այն պատճառով, որ նույն Իտալիայում XV դարի վերջին, երբ կատարվեց սոցիալ-տնտեսական կյանքի անկում, ոչնչացան մանուֆակտուրային ձեռնարկությունները (կապիտալիզմի սաղմերը), երկիրը ապրեց իր Վերածնության նոր բարձրագույն աստիճանը։ Իտալիայի սոցիալ-տնտեսական կյանքում XIV—XV դարերում առաջացած կապիտալիզմի սաղմերը չէին կարող դոմինանտ լինել։ Այդ ժամանակ Իտալիայում ֆեոդալական հասարակություն էր, որի ընդերքում զարգանում էին կապիտալիստական հասարակության անցման նախադրյալները, հասարակության, որը Իտալիայում չհաստատվեց ընդհուպ մինչև XIX դարը։

Պնդել, թե Վերածնությունը բուրժուական կուլտուրա է, ինչպես այդ անում է Բ. Առաքելյանը, նույնպես ճիշտ չէ։ Այստեղ ամենից առաջ պետք է ունենալ հստակ պատկերացում «բուրժուա» հասկացության վերաբերյալ։ Բ. Առաքելյանը «բուրժուազիայի» տակ հասկանում է արդյունաբերական բուրժուազիա, քանի որ, նրա կարծիքով, կապիտալիստական արտադրական եղանակն է, որ ծնում է Վերածնություն, ուրեմն՝ խոսելով Վերածնության, որպես բուրժուական կուլտուրայի մասին, նա հասկանում է միայն արդյունաբերական բուրժուազիայի կուլտուրա, այն բուրժուազիայի, որը պատմության մեջ դեռևս գոյություն չէր ունեցել։ Բ. Առաքելյանը նկատի չի առնում առևտրավաշխառուական բուրժուազիայի գոյությունը։ Սակայն այս դեպքում էլ մենք կասենք, որ պետք է նկատի ունենալ այն, որ Վերածնությունը միատարր, ամբողջական տեղություն չէ, որ Վերածնության մեջ գոյություն ունեին դանազան հոսանքներ, որոնք ներկայացնում էին հասարակության դանազան շերտեր։ Վերածնության մեջ կար աշխատավոր շերտերի գաղափարախոսություն, օրինակ, Ռարլեն՝ Ֆրանսիայում, Մյունցերը՝ Գերմանիայում, Սերվանտեսը՝ Իսպանիայում, Կամպանելան՝ Իտալիայում։ Կար քաղաքային բյուրգերության և առևտրա-վաշխառուական բուրժուազիայի գաղափարախոսություն. օրինակ՝ Մակիավելին՝ Իտալիայում, Ռոնսարը՝ Ֆրանսիայում, Էրազմ Ռոտերդամցին, Ռեյխլինը՝ Գերմանիայում։ Կար նաև արիստոկրատական հոսանք. օրինակ, Մարդարիտա Նավառացու խմբակը՝ Ֆրանսիայում, Գուտենը՝ Գերմանիայում։ Իհարկե, Վերածնության այդ հոսանքների մեջ կար ո՛չ միայն տարբերություն, այլև ընդհանրություն, որը նրանց միացնում էր։ Այդ ընդհանուրը նրանց պայքարն էր ընդդեմ ֆեոդալական աշխարհի և նրա գաղափարախոսության։

Այսպիսով, Բ. Առաքելյանը սխալվում է, երբ առանց դիֆերենցիացիայի Վերածնության կուլտուրան վերագրում է բուրժուազիայի ստեղծագործությանը։

Բ. Առաքելյանը Հայաստանի Վերածնության վերաբերյալ փաստերը քննում է միակողմանի, դեռ ավելին, բերում է այնպիսի նյութեր, որոնք նպաստավոր են իր համար և անուշադրության է մատնում այն փաստերը, որոնք խոսում են իր դեմ։ Այնուամենայնիվ, նա ընդունում է, որ X—XIII դարերում Հայաստանում արտադրողական ուժերի զարգացման առկայության պայմաններում ձևավորվում էին խոշոր տնտեսություններ՝ ապրանքների մեծ մասշտաբի արտադրությամբ, քաղաքներում առաջացել էին հարյուրից ավելի արհեստագործական տեսակների արտադրություններ, «կատարելագործվում էր արհեստագործության տեխնիկան», «խորանում էր աշխատանքի բաժանումը, «արհեստային արտադրության տեխնիկան նկատելիորեն հարմարեցվում է ապրանքային արտադրության պահանջներին»։ Այնուհետև Բ. Առաքելյանը ընդունում է ներքին և միջազգային առևտրի առկայությունը Հայաստանի տերիտորիայում, ընդունում է, որ «աճել էր դրամական շրջանառությունը, առք ու վաճառքի ժամանակ երբեմն վճարում էին տասնյակ հազար (մինչև 60 հազար և ավելին) ոսկի և արծաթ դիրհեմի հասնող գումարներ... առաջացել էր բանկային գործարքներ հիշեցնող մի կարգ» (նույն տեղում, էջ 95) և այլն։

Սակայն, անգամ այդ բերված փաստերից Բ. Առաքելյանը հանում է անճիշտ եզրակացություններ, այն է. «Ապրանքային արտադրությունը ինքը, լինելով արտադրողական ուժերի զարգացման հետևանք, խոշոր չափով նպաստում էր նրանց հետագա զարգացմանը և ֆեոդալական հասարակության ընդհանուր առաջադիմությանը» (նույն տեղում, էջ 97), որ «այդ էտապում ապրանքային արտադրությունը սպասարկում է ֆեոդալիզմին ու նպաստում նրա ամրապնդմանը» (նույն տեղում, էջ 107)։ Նույն եզրակացությունը հանում է մեր մյուս ընդդիմախոսը՝ ընկ. Լ. Խաչիկյանը. «Ֆեոդալական քաղաքների առաջացումը, ապրանքային արտադրության ստեղծումը ոչ միայն չէին քայքայում ֆեոդալիզմի տնտեսական ու սոցիալական հիմքերը, այլև՝ հանդիսանալով այդ հասարակության բնական զարգացման արդյունք, նպաստում էին նրա ժամանակավոր ամրապնդմանը» («Տեղեկագիր», 1958, № 3, էջ 108)։

Նման ընդհանրացումների հետ համաձայնվել անհնարին է։ Եթե արտադրողական ուժերի զարգացումը գյուղատնտեսության ու քաղաքային արտադրության մեջ առաջ էր բերում արտադրության միջոցների արտադրության առանձին բնագավառներ, եթե փաստ է քաղաքների առաջացումը և զարգացումը հարյուր հազարից ավելի բնակչությամբ, ապրանքների արտադրությունը ներքին և արտաքին շուկաների համար, առևտրական և վաշխառուական կապիտալի ահռելի կուտակում, դրամական շրջանառությունը այնպիսի մասշտարի, որ հանգում էր միջազգային բանկային օպերացիաների, ապա այդ բոլորը չէր կարող հակասության մեջ չլինել ֆեոդալական կարգերի հետ, չէր կարող չքայքայել ֆեոդալական հասարակության տոչ սիստեմը։ Խոշոր տնտեսական ձեռնարկությունների առաջացումը առևտրա-վաշխառուական բուրժուազիայի ձեռքին, ինչպես այդ մասին վկայում են աղբյուրները, որտեղ լայն չափով կիրառվում էր վարձու աշխատանքը, չէր կարող չառաջացնել պայմաններ նոր, ավելի բարձր հասարակարգի անցման համար։ Վերջապես, գյուղատնտեսության արտադրությունը, որի մի մասը որպես ապրանք մտնում էր շուկա, միաժամանակ դրամական ռենտայի առաջացումը չէին կարող չվկայել այն տեղա-

շարժերի մասին, որ կատարվում էին ֆեոդալիզմի ընդերքում։ Այդ բոլորը խոսում է ոչ թե ֆեոդալիզմի ամրապնդման, այլ նրա քայքայման մասին։

Բ. Առաքելյանը գրում է. «Այսպիսով, չկա արտադրության մեջ կապիտալի որևէ եղանակով ներդրման և ոչ մի փաստ։ Վաճառականը դեռևս որևէ չափով չէր դարձել արտադրության կազմակերպող» (նույն տեղում, էջ 99)։ Բ. Առաքելյանը իրավացի չէ, կա՛ն այդպիսի փաստեր, նա այդ մասին դիտե մեր այն հոդվածից, որը իր կողմից քննադատվում է։ Բերենք դրանցից մեկը։ Սահիպ դիվանին, այն ժամանակվա Հայաստանի առևտրա-վաշխառուական շերտի այդ խոշոր ներկայացուցիչը իր կողմից կապիտալի ներդրման մասին արտադրության մեջ ասում է հետևյալը. «Ինձ մոտ առձեռն ոչ մի դրամ չկա. քանի որ ես հիմարների պես ոսկին հողում չեմ թաղում։ Այն բոլորը, ինչ որ ես ձեռք եմ բերել, ներդրել եմ իմ կալվածքներում եկամուտ ստանալու համար, իսկ այժմ իմ միջոցներն այնքան են, որ ամեն օր դրանցից ստացվող եկամուտը կազմում է հազար դինար» (Рашид-ад-дин, Сборник летописей, т. III, стр. 115)։ Դա այն Սահիպ դիվանին է, որի մասին Ֆրիկը գրում է, թե նա «մըլքեց զերկիր նա բոլոր, հանցեղ սիսաթ ուներ, որ չուներ որ թակաւոր» (Բանաստեղծություններ, 1941, Երևան, էջ 219)։ Սահիպ դիվանին և նրա նման գիշատիչները ստանում էին հսկայական եկամուտներ արտադրության մեջ իրենց կողմից ներդրված կապիտալից։ Այդպիսին էր X—XIII դարերի հայկական բուրժուազիայի բնությունը։ Մեզ զարմանք է պատճառում, որ նրանք, գիտենալով այդ մասին, պնդում են, թե նման «մեծատունները» իրենց գործարքներով ամրապնդում էին ֆեոդալիզմը։

Բ. Առաքելյանը սխալ պատկերացում ունի նախասկզբնական կուտակման մասին։ Նա գրում է. «Վ. Զալոյանն անջատում է կապիտալի նախասկզբնական կուտակումը կապիտալիստական արտադրական հարաբերությունների առաջացման պրոցեսից և գտնում, որ առաջինը նախորդել է վերջինիս։ Մինչդեռ կապիտալի նախասկզբնական կուտակումը և ֆեոդալիզմի ընդերքում կապիտալիստական արտադրական հարաբերությունների առաջացումը կազմում են մի միասնական պրոցես, տեղի են ունեցել ժամանակագրորեն նույն էպոխայում և նշանավորել են ֆեոդալիզմի քայքայումը և անցումը կապիտալիստական էրային» (նույն տեղում, էջ 114)։ Ընկ. Բ. Առաքելյանը ճիշտ չէ, Կ. Մարքսը սովորեցնում է հակառակը։ Նրա «Կապիտալ»-ի 24-րդ գլխում գրված է այսպես. «Հետևաբար այսպես կոչված նախասկզբնական կուտակումը ոչ այլ ինչ է, բայց եթե արտադրողի ու արտադրամիջոցների անջատման պատմական պրոցես։ Նա ներկայանում է իբրև «նախասկզբնական» պրոցես, որովհետև կազմում է կապիտալի ու սրան համապատասխանող՝ արտադրության եղանակի նախապատմությունը», որ կապիտալի նախասկզբնական կուտակումը «ստրուկների ու ճորտերի անմիջական փոխարկումը չէ վարձու բանվորների»։ Ուրեմն պարզ է, որ մենք իրավացի ենք, երբ ընդունելով Հայաստանում նախասկզբնական կուտակման փաստը, հնարավոր ենք համարում ժխտել կապիտալի կուտակման, այն է կապիտալիզմի առկայությունը։

Եթե Բ. Առաքելյանը աշխատում է ժխտել նախասկզբնական կուտակումը Հայաստանում, ապա Աշոտ Հովհաննիսյանը, հակառակը, բերում է հայտնի նյութեր, անգամ հանգում է փաստերին համապատասխան ճիշտ եզրակացությունների, բայց միաժամանակ պնդում է, թե իբր Հայաստանում չի առաջացել «բուրժուազիա», չեն եղել նոր հասարակարգի առաջացման նախադրյալ-

ներ և այլն։ Մեր այս միտքը ապացուցելու համար բերենք նրա աշխատությունից մի քանի քաղվածքներ։ Աշոտ Հովհաննիսյանը IX—XI դարերի սոցիալ-տնտեսական դրության մասին գրում է հետևյալը. «Դա մի ժամանակաշրջան էր, երբ քաղաքների զարգացման և տեղական շուկաների կազմավորման համապատասխան տեղի ունեցավ փակ ֆեոդալական տնտեսության քայքայում, ավելի և ավելի խորանալով ապրանքային արտադրության և ապրանքաղրամային հարաբերությունների ոլորտում» (դիսերտացիայի ավտոռեֆերատ, էջ 17)։ Այս ընդհանրացումը ֆեոդալիզմի քայքայման մասին Աշոտ Հովհաննիսյանի մոտ ունի նաև իր փաստական կողմը։ Նա գրում է. «Սահիպ դիվանը հավանորեն մեկն էր խոշոր այն վաշխառուներից, որոնք սեփականացնում էին անվերճարունակ իշխանների տիրությունը... Այս կարգի գործարքներ ուներ նկատի Կիրակոս պատմագիրը, երբ գրում էր, թե Ուլու Դավիթ թագավորը և նրա գավառատերերը «նեղեալք և տառապեալք, ծախեալք և գրաւ եղեալք զբաղաքս և զգաւառս և ոչ կարեցեալք յադեցուցանել զանյագս ըստ նմանութեան չար տղրկաց», թողնում են իրենց երկիրն ու կալվածները ու փախչում (Աշ. Հովհաննիսյան, «Դրվագներ հայ ազատ. մտքի պատմության», էջ 211—212)։

Ֆեոդալիզմի քայքայման և կապիտալի նախասկզբնական կուտակման պատկերը ավելի քան ցայտուն արտահայտում է Աշոտ Հովհաննիսյանը իր հետևյալ պարբերության մեջ. «Միջազգային տրանզիտի շնորհիվ ուռճացած՝ Հայաստանի բազմահազար բնակչություն հաշվող քաղաքները չէին կարող ապրել ու զարգանալ, եթե հետզհետե հանգրվան չդառնային ներքին առևտրի համար։ Գնալով ընդլայնվում էր աշխատանքի բաժանումը քաղաքների ու նրանց հետ կապված գյուղաշխարհի միջև։ Ապրանքափոխանակության և դրամաշրջանառության աճման զուգընթաց տեղի էր ունենում առևտրա-վաշխառուական կապիտալի կուտակումն ու նրա քայքայիչ ազդեցությունը գյուղի և քաղաքի մանր արտադրողների ու մանր ապրանքատերերի վրա։ Գյուղի և քաղաքի միջև խցկվող վաճառականներն իրենց ձեռքն էն առնում գյուղատնտեսական մթերքների և արհեստագործական արտադրանքների փոխանակումը։ Առանց դիմադրության ու պայքարի չէ, որ քաղաքի և գյուղի արտադրողները կախման մեջ էին ընկնում առևտրա-վաշխառուական կապիտալից։ Այս մասին են վկայում դասակարգային սուր բախումները, որոնցով նշանավորված է Հայաստանի X—XI դարերի պատմությունը» (նույն տեղում, էջ 235—236)։ Աշոտ Հովհաննիսյանի այս կարևոր ընդհանրացումը մենք անվերապահորեն համարում ենք ճիշտ։ Աշոտ Հովհաննիսյանը ոչ միայն հաստատում է մեր թեզը կապիտալի նախասկզբնական կուտակման մասին, այլև խոսում է այն սոցիալ-տնտեսական պայմանների մասին, որ ստեղծվել էր երկրում առևտրա-վաշխառուական կապիտալը արդյունաբերականի վերածվելու համար։ Աշոտ Հովհաննիսյանի մոտ ճիշտ է նաև նրա այն եզրակացությունը, թե «...այնուամենայնիվ Հայաստանում չէին ստեղծվում տակավին «նոր» կամ «բուրժուական» կացութաձև։ Վերջինս գտնվում էր զարգացման նախակապիտալիստական ոլորտում» (նույն տեղում, էջ 201)։

Այս բոլորից հետո տարօրինակ է Աշոտ Հովհաննիսյանի հայտարարությունը այն մասին, թե առևտրա-վաշխառուական կապիտալի առանձին ներկայացուցիչների պարոնանալը (պարոն դառնալը) կամ այլ կարգի ֆեոդալական տիտղոսներ և կոչումներ ձեռք բերելը դարձնում էր նրանց ֆեոդալներ, «նորելուկ» ֆեոդալներ։ Աշոտ Հովհաննիսյանը սխալվում է, երբ ձեռք բերած

դասային իրավունքները նույնացնում է տնտեսական և դասակարգային կեցության հետ, նա չի տեսնում, որ հոնենցները, ումիկները, սահմադիները և դրանց նմանները իրենց տնտեսական կեցությամբ զարգանում էին ոչ թե հետ, դեպի ֆեոդալիզմ, այլ միայն առաջ, դեպի կապիտալիզմ։ Չէ՞ որ հետադարձ շարժումը անհնարին էր, հակապատմական։

Աշ. Հովհաննիսյանը գրում է. «Այս հանգամանքներում (կապիտալիզմի և համազգային կենտրոնացված իշխանության բացակայության պայմաններում — Վ. Զ.) լիակատար թյուրիմացություն պիտի համարել գիտնականներից ոմանց ջանքերը Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանը հատկանշող կուլտուրական վերելքը բնութագրել «Վերածնության» կամ «վաղ Վերածնության» տերմիններով։ Այդ տերմինների կիրառումը միանգամայն անտեղի է և հակագիտական պատմության մի ժամանակաշրջանի համար, երբ լիովին բացակայում էին անհրաժեշտ պայմաններ ֆեոդալիզմի քայքայման ու ֆեոդալիզմից կապիտալիզմին անցնելու համար» (նույն տեղում, էջ 112)։ Վերածնությունը բացատրել կապիտալիզմի և համազգային կենտրոնացված իշխանության առկայությամբ, ինչպես այդ անում է Աշ. Հովհաննիսյանը, ճիշտ չէ, թեկուզ այն հանրահայտ պատճառով, որ բազմաթիվ են այն երկրները, որոնք ունեցել են իրենց Վերածնությունը (օրինակ, Իսպանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Լեհաստան), որի ձևավորումը նախորդել է կապիտալիզմի առաջացմանը։ Ինչ վերաբերում է համազգային կենտրոնացված իշխանությանը, ապա հայտնի չէ արդյոք, որ Իտալիան՝ Վերածնության այդ կլասիկ երկիրը, ծայր աստիճան մասնատված էր, բաժանված առանձին փոքրիկ պետական միավորումների։ Աշ. Հովհաննիսյանը Հայաստանում Վերածնությունը ժխտում է ֆեոդալիզմի քայքայման և ֆեոդալիզմից կապիտալիզմի անցման համար անհրաժեշտ պայմանների բացակայության պատճառով։ Բայց չէ՞ որ ինքը Աշ. Հովհաննիսյանը, ինչպես մենք ցույց տվեցինք, խոսում էր «ֆեոդալիզմի քայքայման», «կապիտալի կուտակման» և «նախակապիտալիստական ոլորտի» մասին։

Գրել է մեր դեմ նաև Հ. Թումանյանը։

Դժբախտաբար ընկ. Թումանյանը իր հոդվածում չի հենվում պատմական փաստերի վրա և երբ փորձում է անդրադառնալ X—XIII դարերի սոցիալ-տնտեսական կյանքին վերաբերող նյութերին, թույլ է տալիս լուրջ սխալներ։ Օրինակ, նա պնդում է. «Առաջացել էին վաճառականներ ու վաշխառուներ, սակայն սրանց հարստության հիմնական ձևը (?) շարունակում էր մնալ փողը, իսկ եթե սրանք ձեռք էին բերում հողային կալվածքներ, ապա դրանք մեծ մասամբ նվիրարերում էին վանքերին ու եկեղեցիներին։ Ուրիշ խոսքով ասած՝ վաճառականությունն ու վաշխառությունը ոչ թե քայքայում էին ֆեոդալական կալվածքը, այլ օժանդակում էին նրա զարգացմանը» («Տեղեկագիր», 1958, № 5, էջ 64)։ Ուրեմն Հոնիցնեսը, Ումիկնեսը, Սահիպ դիվանու նմանները կալվածքներ էին ձեռք բերում տասնյակ հազար կարմիր դուկատներով ոչ թե նոր և նոր նկամուտների, այլ հոգու փրկության համար։

Ընկ. Հ. Թումանյանը ընդհանուր տնտեսական (մեթոդոլոգիական) խնդիրները ներկայացնում է ոչ ճիշտ։ Այսպես, նա շփոթում է կապիտալի նախաբսկզբնական կուտակումը կապիտալիստական կուտակման հետ, անտեսում է, որ առաջինը կապված է ֆեոդալական, իսկ երկրորդը կապիտալիստական աշխարհի հետ։ Հ. Թումանյանը նախասկզբնական կուտակման ամենակարևորա-

դույն արտահայտության՝ գյուղացիների ունեզրկման մասին գրում է հետևյալը. «Անմիջական արտադրողներին էքսպրոպրիացիայի ենթարկելու այդ նույն պրոցեսը նշանակում է վարձու բանվորների դասակարգի առաջացումը», որ գյուղացիության ունեզրկման հետևանքով «գյուղում առաջացել էր կապիտալիստական հողագործություն, իսկ քաղաքում կապիտալիստ ձեռնարկատերեր» (նույն տեղում, էջ 55)։ Բայց չէ որ գյուղացիության ունեզրկումից մինչև նրա բանվոր դասակարգ դառնալը մի ամբողջ պատմական ճանապարհ է, որ պետք է դեռ անցնել, ճիշտ այնպես, ինչպես առևտրական կամ վաշխառուական կապիտալի ներկայացուցիչը դեռ երկար ճանապարհ պիտի անցնի, որպեսզի նա դառնա կապիտալիստ ձեռնարկատեր։

Ընկ. Հ. Թումանյանի պատմական Հայաստանում նախասկզբնական կուտակման թեզի դեմ գրած հոդվածի հիմքում ընկած է այն փաստը, որ X դարից Հայաստանում առաջացել է ճորտատիրություն, մի երևույթ, որը ըստ Հ. Թումանյանի, բացասում է նախասկզբնական կուտակման հնարավորությունը։ Ավելին, այդ ճորտատիրության փաստի հիման վրա ընկ. Հ. Թումանյանը անտեսում է նախասկզբնական կուտակման բոլոր գործոնները։ Նա գրում է, որ գյուղացիների ունեզրկումը, որպես օրենք, կատարվում է ճորտատիրության վերացումից հետո միայն, որ «այդպես է եղել Անգլիայում, այդպես է եղել Ռուսաստանում, այդպես է կատարվել նաև մյուս երկրներում» (նույն տեղում, էջ 56)։ «...Ռուսաստանում նախասկզբնական կուտակումը, որը հատկապես ծավալվեց XIX դարի երկրորդ կեսին, երկրի տնտեսական զարգացման առանձնահատկություններին համապատասխան դրսևորվեց ճորտատիրական իրավունքի վերացմամբ» (նույն տեղում, էջ 55)։

Այսպիսի դատողությունները պատմական փաստերը անտեսելու հետևանք են։ Նախ՝ Հայաստանում X—XIII դարերում ճորտատիրությունը չնչին զարգացում է ունեցել, մենք շատ քիչ անգամ ենք հանդիպում մեր մատենագիրների մոտ հիշատակություններ ճորտատիրության մասին, այնուամենայնիվ, անկասկած, գյուղացիության որոշ մասը եղել է ամրացած հողին։ Սակայն սխալ է այն պնդումը, թե ճորտատիրության այդ փաստը կարող էր խոչընդոտ հանդիսանալ ֆեոդալիզմի ընդերքում նրա բացասման տարրերի առաջացման համար։ Այդպես չի եղել և ոչ մի երկրում։ Ո՞վ չգիտե, որ Ռուսաստանում ճորտատիրությունը իր ամբողջ թափով շարունակում էր իր գոյությունը մինչև 1861 թ., մինչդեռ նույն ճորտատիրական Ռուսաստանում կապիտալի նախասկզբնական կուտակումը, հակառակ Հ. Թումանյանի պնդման, սկսվել էր դեռևս XVII դարում։ Ուրեմն նախասկզբնական կուտակման առաջացումը կապել ճորտատիրության վերացման հետ, ինչպես այդ անում է Հ. Թումանյանը, ճիշտ չէ։

Այս բոլորից երևում է, որ ճիշտ են պատմական Հայաստանում կապիտալի նախասկզբնական կուտակման թեզի ոչ թե ժխտողները, այլ կողմնակիցները։ Ճիշտ է և այն, որ մենք հավանական ենք համարել կապիտալիզմի առանձին սաղմերի գոյությունը։ Այդ հավանականության վրա մենք պնդում ենք և հիմա։ Սակայն ճիշտ է նաև այն, որ այդ վիճելի հարցում պատահել է, որ մեր կողմից թույլ է տրվել այս կամ այն մասնավոր հարցի անհաջող ձևակերպում, անգամ սխալ սահմանում, դրանց քննադատությունը մենք ընդունում ենք երախտագիտությամբ։

Վ. ՉԱԼՈՅԱՆ